ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համար

ԲԱԶՄԱՉԱՓ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆԴԵՔՍ

Բազմաչափ աղքատության ազգային ինդեքսը (ԲԱԻ) երկրում աղքատությունը չափելու գործիք է, որը հարմարեցված է տարբեր երկրների յուրահատկություններին՝ կառուցված «Օքսֆորդի աղքատության և մարդկային զարգացման նախաձեռնության» մեթոդաբանության վրա: Այս ինդեքսն այլընտրանք է աղքատությունը չափելու ավանդական մոտեցմանը, որում աղքատությունը դիտարկվում է զուտ դրամական տեսանկյունից: Փոխարենը՝ աղքատությունը 5 չափականությունների տեսանկյունից դիտարկելը, ներառյալ՝ (1) հիմնարար կարիքներ, (2) բնակարանային պայմաններ, (3) կրթություն, (4) աշխատաշուկա, (5) առողջապահություն, թույլ է տալիս այն ըմբռնել առավել համապարփակ կերպով և լոկալ համատեքստի շրջանակներում:

Այս քաղաքականության առաջարկում ամփոփված են մի քանի հիմնական տվյալներ այն ցուցանիշների նկարագրական վերլուծությունից, որոնց դեպքում զրկանք կրելու մակարդակը Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերի բնակչության շրջանում կազմել է առնվազն 50%: Այս տվյալներին հաջորդում են քաղաքականության բարելավման կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ առաջարկներ:

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Այստեղ ներկայացված բովանդակությունը ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամի պատասխանատվությունն է, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ԲԱԻ ոլորտներն՝ ըստ ցուցանիշների

Ընտրված 24 ցուցանիշների շարքում աղքատության մակարդակն ամենաբարձրն է արժանապատիվ կյանք, առողջ ջեռուցում, աշխատաշուկայի մասնակցություն և արժանապատիվ աշխատատեղ ցուցանիշների համար: *Զրկանք կրող ՏՏ-ների բաշխումը բոլոր երեք մարզերով.*



Արժանապատիվ կյանք

Այս ցուցանիշը վերաբերում է նրան, թե արդյոք տվյալ ՏՏ-ն կարող է թույլ տալ իրեն գնել սնունդ կամ հագուստ: ՏՏ-ն համարվում էր աղքատ, եթե հարցվողները նշում էին, որ բավարար գումար չկա ամենօրյա սննդի կամ հագուստի համար: *Զրկանք կրող ՏՏ-ների բաշխումը ներկայացված է ստորև.*



Դրամական փոխանցումներից կախվածություն

Դրամական փոխանցումներից կախվածության ցուցանիշը վերաբերում է այն SS-ներին, որոնց սպառման մակարդակն ավելի ցածր է, քան պարենային աղքատության շեմը՝ փոխանցումները նվազեցնելուց հետո: Նման տնային տնտեսությունները համարվել են աղքատ: Աղքատ են համարվել նաև փոխանցումներ չստացած, բայց աղքատության պարենային շեմից քիչ սպառում ունեցած SS-ները: *Զրկանք կրող SS-ների բաշխումը ներկայացված է ստորև.*



Երկարաժամկետ գործազրկություն

Երկարաժամկետ գործազրկության ցուցանիշով SS-ն համարվել է զրկանք կրող, եթե աշխատունակ տարիքի որևէ անդամ մեկ և ավելի տարի գործազուրկ է եղել և ակտիվ աշխատանք է փնտրում: Զրկանք կրող չեն համարվել այն SS-ները, որոնք աշխատանքային տարիքի անդամներ չեն ունեցել: *Զրկանք կրող SS-ների բաշխումը ներկայացված է ստորև.*



Արժանապատիվ աշխատատեղ

Արժանապատիվ աշխատատեղերի ցուցանիշով SS-ն համարվել է զրկանք կրող, եթե բոլոր աշխատող անդամները կամ ինքնազբաղված են եղել, կամ նպաստել են ընտանեկան բիզնեսին: Այս ցուցանիշով ինքնաբերաբար զրկված են համարվել նաև այն SS-ները, որոնք զրկանք կրող են համարվել աշխատանքի նախորդ երկու ցուցանիշներով: Աշխատունակ տարիքի անդամ չունեցող SS-ները զրկանք կրող չեն համարվել: *Զրկանք կրող SS-ների բաշխումը ներկայացված է ստորև.*



ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Լոռու մարզն ամենաանապահովն է (71.3%) առօրյա սննդի և հագուստի համար բավարար գումար չունենալու առումով: Այս ցուցանիշով ամենաանապահովը Սպիտակն է (80.1%): Մսով կամ համարժեք բուսական սննդով սնվելու հնարավորության համեմատ (Սպիտակում SS-ների 83,7%-ը, Իջևանի SS-ների 74,3%-ը դա չէր կարող իրենց թույլ տալ), գումարի կամ այլ ռեսուրսների սղության պատճառով, զգալիորեն ավելի քիչ մարդ է առանց սնվելու մի ամբողջ օր անցկացրել: Աշխատաշուկային մասնակցությունը երեք մարզերի համար զրկվածության ևս մեկ կարևորագույն ցուցանիշ է: Աշխատունակ տարիքի (15-75) անձանց կեսից ավելին աշխատաշուկայի մաս չի կազմում (55.9%), իսկ 39.6%-ը երկարաժամկետ գործազուրկ է:
Գյուղացիական տնտեսություններում առավել մեծ թվով ինքնազբաղված անձինք գրանցվել են Լոռու գյուղական համայնքներում (51.2%), Սպիտակում (30.8%) և Շիրակի գյուղական համայնքներում (26.2%): Հետևաբար՝ նախարարությանն առաջարկվում է ռեսուրսներն ու գործունեությունը հիմնականում ուղղել երկու ուղղությամբ: Ստորև համառոտ կերպով ներկայացվում են այդ ուղղությունները, որոնց հաջորդում են առաջարկվող քայլեր՝ ուղղված այդ խնդիրները հասցեագրելուն:

1. Սննդի հասանելիություն

Սննդի հասանելիությունը ուշադրություն գրավող խնդիր է: Ինչպես փաստում են հետազոտության տվյալները, ուսումնասիրված բոլոր համայնքներում հարցվածների ավելի քան 50%-ը չեն կարող իրենց թույլ տալ յուրաքանչյուր երկրորդ օրը սնվել մսով, հավով, ձկով (կամ համարժեք բուսական փոխարինիչներով՝ բուսակերների համար): Այսպիսի մարդկանց ամենաբարձր տոկոսը գրանցվել է Լոռիում, իսկ համայնքների մակարդակում այս հարցում առաջատարը Սպիտակն է: *Զրկանք կրող SS-ների բաշխումը ներկայացված է ստորև.*



Առաջարկվող քայլ՝ հասցեագրելու սննդի հասանելիության հիմնախնդիրը

Որտեղ.
Շիրակի գյուղական համայնքներ, Լոռու գյուղական համայնքներ, Տավուշի գյուղական համայնքներ, Տավուշի քաղաքային համայնքներ, Գյումրի, Վանաձոր, Սպիտակ, Իջևան

Ինչ (կարճաժամկետ և միջնաժամկետ).
Առողջ սննդակարգի վերաբերյալ տեղեկատվական արշավ՝ ապահովելու համար հանրության իրազեկվածությունը, որ առողջ սննդակարգը հնարավոր է ապահովել մատչելի գնով՝ կենդանական ծագման սննդի փոքր քանակությամբ, ներառյալ կաթնամթերքը, ձուն և մանր ձուկը, որոնք համալրում են սննդանյութերով հարուստ բուսական սնունդը:

2. Մասնակցություն աշխատաշուկային

Հարցման ընթացքում դուրս են բերվել նաև աշխատաշուկային մասնակցությանն առնչվող խնդիրները: Այս ցուցանիշը բացահայտում է այն տնային տնտեսությունները, որտեղ աշխատունակ տարիքի անձանց (15-75) կեսից ավելին աշխատանք չունի: Տնային տնտեսությունները,

որոնք չունեն աշխատունակ տարիքի անձ, չեն համարվել զրկանք կրած: Լոռիում և Շիրակում այս ցուցանիշով տնային տնտեսությունների ավելի քան 50%-ը զրկված է: Համայնքային մակարդակում 50%-ից բարձր զրկվածության ցուցանիշը գրանցվել է Սպիտակում (բոլոր համայնքներից ամենաբարձր ցուցանիշը), Վանաձորում և բոլոր երեք մարզերի գյուղական համայնքներում: *Զրկանք կրող ՏՏ-ների բաշխումը ներկայացված է ստորև.*



Առաջարկվող քայլեր՝ հասցեագրելու աշխատաշուկային մասնակցության հիմնախնդիրը

Որտեղ.
Շիրակի գյուղական համայնքներ, Լոռու գյուղական համայնքներ, Տավուշի գյուղական համայնքներ, Վանաձոր, Սպիտակ

Ինչ (կարճաժամկետ և միջնաժամկետ).
1. Իրականացնել կարիքների գնահատում յուրաքանչյուր համայնքում աշխատաշուկային մասնակցելու տեսանկյունից համար: Կազմակերպել համապատասխան դասընթացներ բնակիչների համար՝ հիմնվելով կարիքների գնահատման արդյունքների վրա:
2. Փոքր երեխաներով ընտանիքներին տրամադրվող աջակցությունն ուղղել ընտանիքի ներսում գենդերային դերերի առավել հավասար բաշխման խթանմանը՝ կանանց համար ապահովելով աշխատաշուկայում ներգրավվածության ավելի լայն հնարավորություն: Տղամարդկանց տրամադրել երեխայի խնամքի արձակուրդ և իրազեկել այդ հնարավորության վերաբերյալ:

Ինչ (երկարաժամկետ).
1. Սահմանել հստակ կոորդինացված և թիրախային ֆինանսական աջակցություն Տավուշի, Շիրակի և Լոռիի գյուղական բնակավայրերի համար՝ մարզերի զարգացումը խթանելու նպատակով:
2. Բարձրացնել հանրության իրազեկվածությունը ՏԻՄ-երի կողմից համայնքային ռազմավարական ծրագրերի կիրառման կարևորության վերաբերյալ:
3. Մշակել կրթական շրջանակներ համայնքում հմտությունների և տեխնոլոգիաների զարգացման համար: